# ««ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածը լրացնել 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ .

«5. Պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են նաև համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ՝ յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից օրենքով սահմանված չափով և կարգով յուրաքանչյուր հաշվետու տարում պետական բյուջե հաշվարկված ռոյալթիի չափի երկու տոկոսից (այսուհետ՝ համայնքային ռոյալթի)։ Սույն հոդվածի իմաստով ռոյալթի վճարող է համարվում Հայաստանի Հանրապետության հարկային **օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ռոյալթի վճարողները**։

6. Համայնքային ռոյալթին բաշխվում է համայնքների բյուջեների երկաստիճան համակարգով՝ ըստ հետևյալ բանաձևերի.

$Ռ^{ազդ.} = Ռ^{հ} x 50\%$

որտեղ՝

$Ռ^{ազդ.}$ – տվյալ ռոյալթի վճարողի կողմից շահագործվող հանք(եր)ի ազդակիր համայնք(ներ)ին հավասարապես բաշխման ենթակա ընդհանուր ռոյալթիի չափ

$Ռ^{հ}$ - համայնքային ռոյալթիի տոկոսային չափ (2%)։

$Ռ^{\text{այլ հ}} = Ռ^{\text{հ}} \text{ x } 50\%$

որտեղ՝

$Ռ^{\text{այլ հ.}}$ – ընդհանուր վերցրած՝ Հայաստանի Հանրապետությունում ռոյալթի վճարողների կողմից շահագործվող հանք(եր)ի ազդակիր համայնք(ներ)ին հավասարաչափ բաշխման ենթակա ռոյալթիի չափ

$Ռ^{\text{հ}}$ - համայնքային ռոյալթիի տոկոսային չափ (2%)

Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով սույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ տարվա արդյունքներով պետական բյուջե վճարման ենթակա հաշվեգրված ռոյալթիի հանրագումարից։

7. Բաշխված համայնքային ռոյալթիի գումարը կարող է ծախսվել այն ուղղություններով, որոնք սահմանվում են կառավարության կողմից՝ բացառելով :

8. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված բանաձևերով համայնքներին բաշխված համայնքային ռոյալթիները հանդիսանում են համայնքային բյուջեներին անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ։»։

**Հոդված 2.** Օրենքի $28^{1}$-րդ հոդվածի 1.1 մասի բ) կետում «չափերով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով սահմանված կարգով համայնքներին բաշխվող համայնքային ռոյալթիների» բառերով։

**Հոդված 3.** Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել $3^{1}$ մասով հետևյալ բովանդակությամբ.

«$3^{1}$. ՀՀ կառավարության որոշմամբ կարող է սահմանվել սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային ռոյալթիի ծախսերի մասով հաշվետվության առանձին ձևաչափ։»

**Հոդված 4.** Օրենքի 36-րդ հոդվածի  գ) կետում «կայքում,» բառից հետո լրացնել «իսկ սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային ռոյալթիի ծախսերի մասով հաշվետվությունը առանձին հրապարակվում է տվյալ համայնքի և/կամ մարզի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ,» բառերով։

**Հոդված 5.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ին:

2. Կառավարությունը սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված որոշումն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա ՍԱՐԳՍՅԱՆ**

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 86-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի դ. ենթակետում «վճարներից» բառից հետո լրացնել «և ռոյալթիներից» բառերով:

**Հոդված 2.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասի 5) կետից հետո ավելացնել 5.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝

«5.1 Հաստատում է ռոյալթիներից գոյացած գումարների ծախսման ծրագրերը և վերահսկում դրանց իրականացումը»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա ՍԱՐԳՍՅԱՆ**